ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 02-44

ք. Երևան «23» հունվար **2018թ.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հարությունյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Նվիրատու» մի կողմից, և «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրեն Լ.Գրիգորյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝«Նվիրառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանգրով, ՀՀ կողմից 2018 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի «18.Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագիր» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ «Միջոցառումներ»), Նվիրատուն սեփականության իրավունքով Նվիրառուին անհատույց հատկացնում է **29 056 000** (քսանինը միլիոն հիսունվեց հազար) ՀՀ դրամ գումարի չափով դրամաշնորհ՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցին համապատասխան:

1.2. Միջոցառումներն իրականացվելու են սույն պայմանագրի N 1 հավելված՝ «Տեխնիկական բնութագրի» պահանջներին և N 2 հավելվածով սահմանված միջոցառումների իրականացման ժամանակացույցին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը.

2.1.2 Առանց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Նվիրառուի կողմից իրականացված միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) Նվիրառուն խախտել է միջոցառումների իրականացման ժամկետը և այն չի կարող մատուցվել ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել միջոցառումների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Նվիրառուից վճարելու սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը.

2.2 Նվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան իրականացված միջոցառումների արդյունքը, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Նվիրառուին:

2.2.2 Միջոցառումների արդյունքն ընդունելու դեպքում Նվիրառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 4.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Նվիրառուն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև միջոցառումների արդյունքը Նվիրատուին ներկայացնելը, Նվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Նվիրատուից պահանջել վճարելու մատուցված միջոցառումների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև միջոցառումների արդյունքը Նվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում

պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Նվիրատուին:

2.3.3 Նվիրատուի կողմից ժամկետների խախտման դեպքում Նվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 4.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Նվիրառուն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել միջոցառումների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Նվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Նվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Նվիրատուին վճարել սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով, իսկ հաշվետու տարվա արդյունքներով պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով չօգտագործված ֆինանսական միջոցները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

2.4.6 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Նվիրառուն յուրաքանչյուր եռամսյակ միջոցառումների ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուին է հանձնում միջոցառումների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Նվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ միջոցառումները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Նվիրառուի կողմից իրականացված միջոցառումների արդյունքը Նվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

3.4. Իրականացված միջոցառումների վերջնահաշվարկը իրականացվում է ըստ եռամսյակային տվյալների:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Նվիրառուն պատասխանատվություն է կրում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

4.2 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Նվիրատուի կողմից միջոցառումների արդյունքը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Նվիրառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 1 %-ի չափով:

4.3 Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետը խախտելու դեպքում Նվիրառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չիրականացված միջոցառման արժեքի 0,05 %-ի չափով:

4.4 Սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառումների իրականացման արդյունքում Նվիրառուին վճարման ենթակա գումարներից:

4.5 Նվիրատուի կողմից վճարման համար նախատեսված ժամկետի խախտման համար Նվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

4.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ պայմանագրի դրույթները գործում են 2018 թվականի հունվարի 1-ից ծագած կողմերի փաստացի իրավահարաբերությունների վրա:
6.2 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
6.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր կերպով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
6.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
6.5 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N3 հավելվածները, բաղկացած 3 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն վ ի ր ա տ ու	**Ն վ ի ր ա ռ ու**
ՀՀ կառավարությանն առընթեր պետական	**«Աճուրդի կենտրոն» պետական ոչ**
գույքի կառավարման վարչության	**առևտրային կազմակերպության տնօրեն**
աշխատակազմի ղեկավար	**ք. Երևան, Դ.Անհաղթի 23**
ք.Երևան, Տիգրան Մեծի 4	**ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Զեյթուն մասն.**
Գանձապետարանի Երևանի թիվ 1	**Հ/Հ 163518000480**
բաժանմունք	**ՀՎՀՀ 02504535**
Հ/Հ 900011019024	
ՀՎՀՀ 02528489	
_____ Վ. Հարությունյան	**_____ Լ. Գրիգորյան**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված N 1
2018 թ.
պայմանագրի

«___»
կնքված N

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Էլեկտրոնային եղանակով աճուրդների իրականացման նպատակով ձեռք բերվող ծրագիրը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

1. Էլեկտրոնային աճուրդների կայքի ստեղծում ***երեք լեզվով (հայերեն, ռուսերեն, անգլերեն)*** մոբայլ և այլ սարքերի համար տարբերակներով, հաճախորդների հաշվի, կայքի կառավարման համակարգի ստեղծում, Հայաստանում առկա վճարային համակարգի ներդրում, կայքի սպասարկում,

այդ թվում՝

- Կայքի գլխավոր էջի, ներսի ինֆորմացիոն էջերի, հաճախորդի գրանցման և հաշիվ էջերի, ադմինիստրատորի էջերի ձևավորում
- Կայքի frontend ծրագրավորում, օգտագործելով responsive design (bootstrap) կառուցվածք, նաև մոբայլ սարքերի վրա կայքը ճիշտ արտացոլելու նպատակով, ներառյալ կառավարման համակարգը:
- Կայքի և տվյալների բազայի կառուցվածքի մշակում
- Կայքի backend ծրագրավորում, ներառյալ՝ հաճախորդի հաշիվը
- Կայքի ադմին պանելի ծրագրավորում
- Կայքում հաճախորդներին տեղեկացման SMS համակարգի ներդրում և 1 տարվա ապահովում
- Օնլայն վճարային համակարգի ինտեգրում
- Կայքի կոդի օպտիմիզացում և թեստավորում
- Կայքի սպասարկում 1 տարի ժամկետով

2. Սերվերի գնում, ծրագրային ապահովման լիցենզիաների գնում, սերվերի երաշխավորված ինտերնետի վարձակալություն, հոսանքի և հովացման անխափան ապահովում, սերվերի սպասարկում՝

այդ թվում՝

- Սերվեր Dell PowerEdge T630+E5-2699v3...
- Սերվերի սնուցում և հովացում 1 տարի
- Ինտերնետ 100 Mb/s 1 տարի
- Լիցենզիա ISP manager
- Սերվերի առաջնային կարգավորում
- Սերվերի սպասարկում 1 տարի ժամկետով

Ն վ ի ր ա տ ու

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավար

ք.Երևան, Տիգրան Մեծի 4

Գանձապետարանի Երևանի թիվ 1 բաժանմունք

Հ/Հ 900011019024

ՀՎՀՀ 02528489

_____ Վ. Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ

Ն վ ի ր ա ռ ու

«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

ք. Երևան, Դ.Անհաղթի 23

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ «Զեյթուն» մասն.

Հ/Հ 163518000480

ՀՎՀՀ 02504535

_____Լ.Գրիգորյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
« »_____ 2018թ.
_____ կնքված պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

NN	Միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացումը 2018թ. ընթացքում
1	2	3
1	*Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման համար կայքի ստեղծում և իրականացում*	***2018թ. ընթացքում՝ եռամսյակային կտրվածքով***

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ. դրամ/

NN	Միջոցառման անվանումը	I եռ.	I կիսամյակ	9 ամիս	տարի
1	2	3	4	5	7
1	*Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման համար կայքի ստեղծում և իրականացում*	5381,2	17279,6	21295,1	29056,0

Ն վ ի ր ա տ ու
ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի
կառավարման վարչության աշխատակազմի ղեկավար
ք.Երևան, Տիգրան Մեծի 4
Գանձապետարանի Երևանի թիվ 1 բաժանմունք
Հ/Հ 900011019024
ՀՎՀՀ 02528489
_____ Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

Ն վ ի ր ա ռ ու
«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրեն
ք. Երևան, Դ.Անհաղթի 23
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ «Զեյթուն» մասն.
Հ/Հ 163518000480
ՀՎՀՀ 02504535
_____ Լ.Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N3
« « _____ 2018 թ.
կնքված N պայմանագրի

Նվիրատու
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման
վարչություն

ք.Երևան, Տիգրան Մեծի 4
Գանձապետարանի Երևանի թիվ 1 բաժանմունք
Հ/Հ 900011019024
ՀՎՀՀ 02528489

Նվիրառու
«Աճուրդի կենտրոն» պետական ոչ
առևտրային կազմակերպություն

ք. Երևան, Դավիթ Անհաղթի 23
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ «Զեյթուն» մասն.
Հ/Հ 163518000480
ՀՎՀՀ 02504535

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » _____ 2018թ.

Պայմանագրի անվանումը՝ աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքների դրամաշնորհի պայմանագիր:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » _____ 2018թ.:

Պայմանագրի համարը՝

Նվիրատուն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, ի դեմս՝ վարչության աշխատակազմի ղեկավար Վ.Հարությունյանի, և Նվիրառուն՝ «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ի դեմս տնօրեն՝ Լ.Գրիգորյանի հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ « »_____ 2018թ. կազմված տեխնիկական հսկողության արտաքին կապերի և ինֆորմացիայի բաժնի N- եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված միջոցառումները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և միջոցառումների մատուցման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին:

Պայմանագրի շրջանակներում Նվիրառուն « » _____ 2018թ.-ից « » _____ 2018թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները՝

Միջոցառման համառոտ նկարագիրը	Միջոցառումներ ի քանակական ցուցանիշները	Միջոցառումների իրականացման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
1	2	3	4	5
Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման համար կայքի ստեղծման աշխատանքներ (.....)				
Ընդամենը				

Նվիրառու՝
_____
(ստորագրություն)
Լ.Գրիգորյան _____
(անուն ազգանուն)
Կ.Տ.

Նվիրատու՝
_____
(ստորագրություն)
Վ.Հարությունյան _____
(անուն ազգանուն)
Կ.Տ.